ՀԱՍՄԻԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԻՑ ՍԵՐՎԱԾ ԱԶԳԱՆՎԱՆԱԿԵՐՏ ՀԻՄՔԵՐ

Հայկական ազգանունների համակարգում մի ստվար խումբ են կազմում «զբաղմունք» իմաստով ազգանվանակերտ հիմքերը, որոնցում գերիշխում են «վաճառական» նշանակությամբ ազգանունները (շուրջ 595 ազգանուններից մոտ 257–ը), որոնք անմիջականորեն կապված լինելով ժողովրդի տնտեսական կյանքի հետ փաստում են, որ XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին Արևմտյան Հայաստանի քաղաքներում արհեստներին զուգահեռ բավականին աշխույժ բնույթ էր կրում նաև առևտուրը: Հայ խոշոր վաճառականներն առևտրական կապեր էին ստեղծում Ֆրանսիայի, Հոլանդիայի, Վենետիկի, Անգլիայի, Հնդկաստանի, Ֆիլիպինյան կղզիների, Սմերիկայի և հեռավոր ռուսական քաղաքների հետ: Միջնորդ վաճառականները ***(Բաղդջյան (թրք.), Բիլազարյան (թրք.), Բլասյան (թրք.), Դալալյան/Դելալյան/Դալարյան (թրք.), Էլչաջյան (թրք.), Հաքեմյան (թրք.) «միջնորդ», Եմենթյան/Եմենջյան/Եմենիջյան (թրք.) «այլոց ապրանք վաճառող»***, հաստատվում էին Կ.Պոլսում, Զմյուռնիայում և Տրապիզոնում: Սրանց էին միանում Կարնեցի, Եվդոկիացի և սեբաստացի դրամատերերը, Ակնից եկած սեղանավորները լումայափոխները, և Կեսարիայի բազազները ***(Զարբհանալյան (թրք.) «դրամատան աշխատող», Աղջաջյան (թրք.) «մանր դրամափոխ», Բիշտեկչյան (թրք.), Թեֆեջյան (թրք.), Սարաֆյան, (արաբ.) «լումայափոխ», Բազազյան (պրսկ.–թրք.) «գործվածքեղեն վաճառող», Ճանֆեսեյան (պրսկ.–թրք.) «մի տեսակ գործվածք՝ մետաքսե դիպակ, տաֆտա վաճառող») և այլն:***

Վաճառականների զգալի մասը միավորվում էր էսնաֆություններում (Արևելյան Հայաստանում համքարություններ), որոնք, ըստ իրենց դրամական կարողությունների, բաժանված էին չորս խմբի սովդաքարներ, բինահդարներ, բազազներ և չարչիներ: Սովդաքարները մեծածախ առևտրով զբաղվող հարուստ վաճառականներն էին, որոնք կապված էին ոչ միայն Թուրքիայի, այլ նաև Եվրոպայի և Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնների հետ ***Գաբամաճյան/Գաֆամաճյան (թրք.) «կոշիկի և հագուստի մեծածախ վաճառական», Մեքենեջյան (թրք.) «մեքենայի առևտրով զբաղվող, մեքենավար», Մուբահաջյան (թրք.) «գնորդ, մեծածախ առևտրով զբաղվող»:*** Կարնեցի սովդաքարների մեջ կային նաև գորգերի մեծածախ առևտրով զբաղվողներ, որոնք Սեբաստիայից ու Կեսարիայից ներմուծում էին գեղեցիկ ձևավորված գորգեր ***Քալջյան (պրսկ.–թրք.) «գորգավաճառ»:*** Բինահդարները մեծածախ ու մանրածախ առևտրով զբաղվող այն վաճառականներն էին, որոնք ունեին խանութներ և հիմնականում կապված էին տվյալ վայրին՝ ***Վաճառականյան (հյ.), Կուպեցյան (ռուս.), Վրիշիկյան (թրք.) «վաճառական», Մախրեջյան/Մահրեջյան (թրք.) «վաճառահանող», «իրացման շուկայի վաճառող, գործակալ»:*** Բազազները սեփական խանութներում իրենց իսկ արտադրանքը (հիմնականում կտորեղեն) վաճառող մանր

առնտրականներն էին, որոնք արհեստավորներից, խոշոր վաճառականներից կամ էլ քաղաքով անցնող քարավաններից գնում էին ապրանք և շրջիկ մանրավաճառների միջոցով ուղարկում գավառները, ծայրամասային գյուղերը վաճառքի ***Դաբգիմայան/Կաբգիմայան/Քապգիմայան (թրք.), Ալանյան (թրք.), Ալմուխյան (թրք.), Մեթենջյան «գնորդ և վերավաճառող», Թաքաջյան (թրք.) «մի տեսակ մետաքսե գործվածք վաճառող», Թյուլպենտժյան/Թուլբենջյան (թրք.) «գործվածքի մի տեսակ՝ բատիստ վաճառող», Սոֆճյան (թրք.) «բուրդ կամ գործվածք վաճառող»:***

Ենթադրում ենք, որ սովդաքարերն ու բինահդարները հիմնականում Կարինի, Եվդոկիայի, Բիթլիսի, Սեբաստիայի, Կեսարիայի, Վանի, Մուշի և Ակնի վաճառականներն էին, քանի որ առնտուրը գերազանցապես զարգացած էր հիշյալ քաղաքներում, և հայտնի վաճառական գերդաստանները, հարուստ առնտրականները հենց այդ քաղաքների բնակիչներն էին: Իսկ Սդերդը, Բալուն, Դերսիմը, Չարսանջակը, մաքր՝ վաճառականներից բացի, մեծածախ առնտրով զբաղվողներ չունեին:

Ազգանունների հաջորդ խումբը իմաստաբանորեն կապվում է գյուղատնտեսական ապրանքների մշակության և վաճառքի հետ.

Արևմտյան Հայաստանի բնակլիմայական պայմանները նպաստավոր էին ընդարձակ տարածություններ մշակելու և գյուղատնտեսական կուլտուրաներ աճեցնելու համար: Գյուղատնտեսությունը քննարկվող ժամանակաշրջանում բավականին զարգացած էր և արդեն ներգրավված շուկայական հարաբերությունների մեջ՝ ***Ազաբյան (թրք.) «գյուղատնտեսության բանվոր, բատրակ», Էկբաշյան (թրք.) «հողագործ, ցանող», Հինականյան (հյ.), Կալավորյան (հյ.) «կալի աշխատող, կալատեր»:*** Մշակվող հողատարածություններում ցանում էին ցորեն, գարի, կանեփ, բամբակ և այլ կուլտուրաներ, աճեցնում միրգ ու հատապտուղ:

Հացահատիկի մշակությամբ զբաղվող շրջանները Խարբերդը, Չարսանճագը, Դերջանը, Ամասիան և Ալաշկերտը, հացահատիկ էին արտահանում Արաբկիր, Դերսիմ, Քղի, Սասուն, Բաֆրա, Չարշամբա և սնծվյան նավահանգիստներ, Վանի ու Բիթլիսի նահանգների անասնապահական շրջաններ՝ ***Բլդուրջյան/Բուլգուրչյան (թրք.) «ծավար պատրաստող և վաճառող», Բուդդաջյան (թրք.) «ցորենավաճառ», Գիլաճյան (թրք.) «սորուն նյութեր (օր.՝ ցորեն, գարի) վաճառող»:***

Տեխնիկական կուլտուրաների, առավելապես կանեփի, բամբակի ու ծխախոտի մշակությունն ու վաճառքը նս զարգացած էին Արևմտյան Հայաստանում: Կանեփը հումք էր հանդիսանում կանեփաթելի և հաշիշի (հաշիշ ստանում էին հնդկական կանեփից) արտադրության համար: Վերջինիս մշակությամբ, առք ու վաճառքով աչքի էին ընկնում Խարբերդի ու Մալաթիայի գավառները ***Քենջիրջյան (թրք.) «կանեփի առնտրով զբաղվող», Բենկչյան (թրք.) «հաշիշագործ – վաճառ»:***

Բամբակագործության ասպարեզում մասնագիտացել էին Խարբերդը, Մալաթիան, Կիլիկիան և Ադանան: Խարբերդում արտադրված բամբակը մեծ համբավ էր վայելում Սեբաստիայի, Կարինի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Հալեպի և Արաբկիրի շուկաներում: Այս վայրերից բացի. Խարբերդի բամբակը ուղարկ-

վում էր Կարնո, Բաղեշի, Դիարբեքիրի նահանգներ և երկրի այլ շրջաններ: Մալաթիայի ու Կիլիկիայի բամբակի մեծ մասը արտահանվում էր Եվրոպա, իսկ Ադանայի բամբակը սնում էր ֆրանսիական տեքստիլ արդյունաբերությունը ***Բամբուկչյան/Բամբուկճյան/Բամպուքճյան (թրք.), Փամբուխչյան/Փամբուղչյան/Փամբուկչյան/Փամբուքյան/Փամբուքչյան/Փափուխչյան (թրք.), Կազակյան (թրք.), Կոզակ-Հարությունյան (թրք.), Կոզակչյան (թրք.) «բամբակավաճառ»:***

Ծխախոտագործությունը նկատելի չափով զարգանում էր 19–րդ դարի 60–70–ական թթ.: Սակայն 1883 թ. ֆրանսիական «Ռեժի» ծխախոտի ընկերությունն իր ձեռքը վերցրեց ամբողջ Թուրքիայի, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի ծխախոտի առևտուրը: Մուշի հոգևոր առաջնորդ Բաբկեն վարդապետն այդ մասին գրում էր. «Ռեժին» ալ ուրիշ պատուհաս մը եղած է խեղճ գյուղացիներուն: Պաշտոնյաներն այժմ իսլամներն են. ատոնք մեծ քանակությամբ ծխախոտի ծրարներ կը տանեն կը թողուն գյուղերը և փոխարեն դրամ կստանան: Ծխող և ոչ ծխող ամեն ոք պարտավոր է գնել և դրամը տալ. այս բռնությունը միայն հայ գյուղերուն համար կըլլա, և այսպես ամեն շաբաթ մեն մի գյուղե 50–150 և ավել դրամ կը գանձեն»[1]:

Չնայած թուրք պաշտոնյաների հարուցած այս և ուրիշ խոչընդոտներին ծխախոտի վաճառքը շարունակվում էր հայերի կողմից, հատկապես Վանի նահանգի Գավաշ, Ջուլամերկ, Բեղելշաբաք, Ոստան գավառներում, Շամդինանում և արտահանվում Անդրկովկաս ***Տաբաշնիկյանց (ռուս.) «ծխախոտագործ – վաճառ», Մեբուրնության (վրաց.) «քթախոտ, բուռնութի պատրաստող», Թութունջյան (թրք.) «ծխախոտագործ, – վաճառ»:***

Բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և վաճառքով առանձնանում էին Կարինի, Երզնկայի և Վանի գավառները, ինչպես նաև Խարբերդի դաշտն և Ալաշկերտի հովիտը: Խարբերդի դաշտում հայտնի էր Քեսերիկ գյուղը, որի բնակիչները բանջարեղենով հագեցնում էին Խարբերդի և Մեզիրեի շուկաները: Ալաշկերտի հովտում այս զբաղմունքով աչքի էին ընկնում հատկապես Խաստուրա, Կարաքիլիսե և Մոլլա–Սուլեյման գյուղերը, որոնք վաճառում էին կանաչեղեն ***Բեստանջյան (թրք.)/Բոստանջյան, Զավզավաթճյան/Զարզավաթճյան (թրք.) «բանջարեղեն մշակող և վաճառող»***, սխտոր ***Սխտորյան (հյ.)***, ճակնդեղ ***(Բանջարջյան/Փանջարջյան (թրք.) «ճակնդեղագործ, – վաճառ»***, դդում, դդմիկ ***(Գաբախչյան/Կաբակչյան (թրք.) «դդում, դդմիկ աճեցնող, վաճառող»)***, շաղգամ ***Շախկամյան/Շաղգամյան (թրք.) «շաղգամ աճեցնող և վաճառող»***, բակլա ***(Բակլայյան/Բակլավաջյան/Բակլաջյան/Բակլատչյան (թրք.) «բակլայի, լոբազգիների մշակությամբ ու առևտրով զբաղվող»)***, ծմերուկ ***Գարբիականջյան/Գարբուզչյան (թրք.) «ծմերուկ աճեցնող և վաճառող»)***, սեխ ***(Գավունկչյան/Գավունջյան (թրք.) «սեխ (նաև դդում) աճեցնող և վաճառող»*** և այլ մթերքներ. Երկրի մյուս շրջաններում, մասնավորապես Բալուում, բանջարեղենի արտադրությունը չուներ ապրանքային բնույթ. հիմնականում բավարարում էր սեփական կարիքները:

---

[1] Դրոշակ, 1901, թիվ 1, էջ 26:

Արևմտյան Հայաստանում երկրագործության կարևոր ճյուղ էր այգեգործությունը, որի արդյունքները՝ հատապտուղները *(Չիլեքչյան (թրք.) «գետնամորի աճեցնող և վաճառող», Գիզմեջյան (թրք.) «կիտրոնավաճառ», Լիմոնճյան (թրք.) «լիմոն աճեցնող և վաճառող»* ու մրգերը թարմ կամ չորացրած *Թրվանջյան/Թրֆանջյան/Թուրֆանջյան (թրք.) «վաղահաս միրգ և բանջարեղեն աճեցնող և վաճառող», Նուբարավաճառյան (հյ.),* ներգրավված լինելով շուկայական հարաբերությունների մեջ, արտահանվում էին երկրի լեռնային շրջաններ ու Անդրկովկաս: Մի շարք գյուղերում խաղողի և մյուս պտղատու այգիները կազմում էին բնակիչների ապրուստի գլխավոր աղբյուրներից մեկը: Այգեգործությամբ աչքի էին ընկնում Կարինի, Վանի, Բիթլիսի և Դիարբեքիրի նահանգները: Արտամետի ու Վանի Այգեստան թաղամասում աճում էին տանձի և խնձորի ամենատարբեր տեսակները: Խարբերդի նահանգի Խարբերդի և Մալաթիայի գավառներում աճեցնում էին թութ, մըշմըշ՝ փոքր, բայց համեղ ծիրան *Զերդելյան (պրսկ.–թրք.) «ծիրանի առևտրով զբաղվող»,* տանձ *(Արմուդյան (թրք.) «տանձավաճառ»,* խնձոր *Խնձորյան (հյ.), Յաբլուկյան (ռուս.) «խնձորի առևտրով զբաղվող գերդաստան», Էլմաջյան/Ալմաջյան (թրք.) «խնձորավաճառ»,* խոշորահատ խաղող *Բախչեյան/Բախչինյան/Բախչեջյան/Բախչեցյան (թրք.), Բաղմանյան/Բաղմաջյան (թրք.), Պագջյան (թրք.), Գերմեջյան (արաբ.–թրք.) «այգեգործ, խաղողագործ»,* սերկևիլ *Այվաջյան (թրք.) «միրգ, հատկապես սերկևիլ վաճառող»,* պիստակ *(Ֆարգճյան (պրսկ.–թրք.), Ֆեստեքջյան (թրք.) «պիստակ աճեցնող և վաճառող»,* իսկ Եվդոկիայի բնակչությունը, բոլոր տեսակի մրգերից բացի, նաև ծիթապտուղ *Զեյթունջյան (արաբ.–թրք.) «ծիթապտուղ, զեյթուն աճեցնող և վաճառող»:*

Բազմատեսակ մրգերի, քաղցրահամ պտուղների արտահանման մեջ առաջին տեղը զբաղեցնում էր թուզը *Ինջիրյան (թրք.) «թուզ և թզի չիր պատրաստող և վաճառող»:*

Բիթլիսի նահանգում այգեգործությամբ զբաղվում էին Բերվարի, Խարզանի և Շիրվանի կազաներում: Այստեղ աճում էր խաղողի «այնպիսի քաղցր տեսակ, որ շաքարի պատվուն կրնար դիպչել»[2]: Եվ այս ամենի բարձր որակն ու խնամքն ապահովում էին հմուտ այգեպանները *Պարտիզպանյան (հյ.), Բախչաքյան (թրք.), Համամչյան/Համամջյան (թրք.) «այգեգործ, այգեպան»:*

Հողագործության զարգացման համար բացառիկ կարևորություն ուներ արհեստական ոռոգումը: Ջրօգտագործումը կանոնավորելու համար նշանակվում էին հատուկ աշխատողներ *Ջրբաշ(խ)յան, Իսկաջյան (թրք.), Մաքսիմաջյան (թրք.) «ջրվոր, ջրբաշխ»:*

Առանձին խումբ են կազմում անասնապահությամբ զբաղվողների անուններից սերված ազգանունները, որոնք փորձում ենք ներկայացնել իմաստային մի շարք ենթախմբերով, քանի որ կան անասնապահ, անասունների վաճառքով զբաղվող, անասնապահության արդյունքները վաճառող և այլ նման հիմքերով ազգանուններ:

---

[2] Մ. Միրախորեան, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, Կ.Պոլիս, 1884, մաս Ա, էջ 63:

Շուկայական հարաբերությունների մեջ էին ներգրավված ոչ միայն խոշոր ու մանր եղջերավոր անասունները, այլև անասնապահության արդյունքները:

Անասնապահությամբ զբաղվում էին Նորոդուզում, Խոշաբում, Աղբակում, Մոկսում, Արճեշում, Խիզանում, Սասունում, Բուլանըխում, Դերսիմում և Բյուրականի (Բինգյոլի) արոտավայրերում: Բինգյոլյան շրջանը խաշնարածության համար համարվում էր լեռնադարխտ իր արոտավայրերով հովասուն խոտատեղիներով, իսկ Գրիգորիոպոլի անասնավաճառները հիմնականում եզ ու ձի էին վաճառում, անգամ ունեին ձիաբուծարան ***Աթքաշյան, Միրախորյան (թրք.) «ձիապան», «ընտիր ձիավոր»:***

Անասունների առք ու վաճառքով զբաղվում էին հիմնականում Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Դիարբեքիրի նահանգներում: Մուշի և Սասունի գավառներից մեծ քանակությամբ անասուններ էին արտահանվում Հալեպ, Դամասկոս, Ուրֆա, Երուսաղեմ և Կ.Պոլիս ***Ջելեբյան (թրք.) «անասնավաճառ», Իխլիջյան (թրք.) «ընտանի կենդանիների առևտրով զբաղվող»***, որոնց խնամքով զբաղվում էին նախրապանները, հովիվներն ու խաշնարածները՝ (***Տավարածյան (հյ.), Խայմուրյան (թրք.), Գուտմերյան (թրք.), Ինեկչյան (թրք.) «տավարած», Հովիվյան (հյ.), Անչեչյան (թրք.) «կաթնասունների ծագերով՝ հորթերով, գառներով զբաղվող», Դավառյան (թրք.), Կուզբաշյան/Կուզուբաշյան (թրք.) «գառնարած», «գառնավաճառ», Դանիջյան (թրք.) «հորթարած», Գավչյան/Գավջյան/Գնչյան (թրք.) «ցուլապահ, եզապահ», Գյուդելեկյան (թրք.) «գրաստ, կով, ոչխար քշող», Ղուդերյան (թրք.) «եզապան, իշապան», Դավլաշյան (արաբ.–թրք.) «ախոռապան»***:

Ներքին ու արտաքին շուկայում լայն սպառման ապրանքներ էին համարվում յուղն ու պանիրը, որոնք արտահանվում էին Կ.Պոլիս, Թուրքիայի այլ քաղաքներ և Ռուսաստան ***Յախչյան/Յաղչյան/Յաղջյան (թրք.) «յուղագործ, –վաճառ», Ջեյթջյան/Ջեյիթջյան (արաբ.–թրք.) «յուղ, հատկապես հալած, պարաստող և վաճառող», Բենդիրճյան (պրսկ.–թրք.) «պանրագործ»***: Կաթնամթերքներից ապրանքային բնույթ էր ստացել կաթի, մածնի, թանի ու կաթնաշոռի սպառումը, որոնց համարժեք ունենք հետևյալ ազգանունները՝ ***Ղայթմանյան (թրք.), Շորջյան (պրսկ.–թրք.), Այուտճյան/Սուրջյան (թրք.) «կաթնավաճառ», Յողուրթչյան (թրք.), Մաճունյան (արաբ.–թրք.) «մածունագործ,– վաճառ», Այրանջյան (թրք.) «թանավաճառ», Լորչյան (թրք.) «կաթնաշոռ, լոռ պատրաստող և վաճառող»***:

Չկնորսությունն ու ձկնարդյունաբերությունը արևմտահայ մարդու և հայկական որոշ գաղութների տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է եղել: Այդ մասին են վկայում համապատասխան իմաստով հետևյալ ազգանունները՝ ***Չկնորսյան (հյ.), Ավչիյան (թրք.), Բալախչյան/Բալդչյան/Պալխչյան/Պալդչյան (թրք.), Բալեկչյան/Բալիկչյան (թրք.), Թոռչանայն/Թոռչյան (թրք.), Թորաջյան/Թորջյան/Թուրաջյան (թրք.) «ցանցագործ, ցանցով ձուկ որսացող, վաճառող», Շիքարյան (պրսկ.–թրք.) «որսորդ, ձկնորս», Հոլդաջյան (թրք.) «կարթ, ձկնորսական սարք պատրաստող»***: Հայ վաճառականները վարձակալում էին ձկնորսության իրավունք և Վանա լճից մեծ քանակությամբ տառեխ որսալով՝ վաճառում (թարմ, աղ դրած կամ ապխտած) երկրի ներսում, արտահանում Ռուսաստան, անգամ Եվրոպա, իսկ հայկական

գաղթօջախներից հատկապես այքի էին ընկնում Գրիգորիոպոլի հայ ծկնորս–վաճառականները:

Նավավարությամբ և սրա հետ կապված մյուս աշխատանքներով նույնպես զբաղվում էին արևմտահայերը. որոնք, բնականաբար, կենտրոնացած էին ծովամերձ քաղաքներում և հատկապես Կ.Պոլսում, Վանա լճի շրջակա բնակավայրերում ***Գայրգչյան (թրք.), Թազակչյան (թրք.) «նավավար», Գիրիրիկյան (թրք.) «գետանցող կամ ջրային այլ տարածք նավով անցկացնող, նավավար», Կամրաստյան (թրք.) «նավը դիմավորող», «գուցե նավահանգստի բանվոր», Կեզիկտոնյան (թրք.) «նավը ջուրը իջեցնող», Համլուլյան (թրք.) «թիավար», Շիմչիյան (թրք.) «նավահանգստի ճոպանը կապող կամ արձակող», Սայլանճյան (թրք.) «լաստ, լաստանավ բանեցնող»:***

Իմաստային հաջորդ խումբը կապվում է մեղվաբուծության հետ: Արևմտյան Հայաստանի լեռնային, անտառաշատ գյուղերում այն բարձրապարանքային բնույթ էր ստացել և իբրև գյուղատնտեսության ճյուղ՝ զբաղվում էր մեղրատու մեղուների բուծմամբ՝ մեղր, մեղրամոմ, ակնամոմ, մեղվակաթ, ծաղկափոշի և այլն ստանալու համար:

Խարբերդի նահանգից արտասահման արտահանվող ապրանքներից մեկն էլ մեղրամոմն էր: Համարժեք հիմքերով մոտ տասներեք ազգանունները ***Ճանճապանյան (հյ.), Բալջյան/Պալչյան (թրք.), Կովանչյան (թրք.), Մահլեբջյան (արաբ.–թրք.) «մեղվաբույծ, – վաճառ», Արաջայան/Արեջյան/Արըչյան/Արիջյան (թրք.) «մեղվապահ», Գոմչյան (թրք.) «մեղրահաց պատրաստող», Սուզմեյան (թրք.) «օշարակ, մեղր քամող»)*** և այլն, մեղվապահ մասնագիտներին Վարագա վանքի վանական տնտեսությունից տրված աշխատավարձի (600 դուրուշ) վերաբերյալ տվյալները[1] ևս փաստում են, որ, իրոք, հայ գյուղացին հիմնավորապես զբաղվել է այդ աշխատանքով:

Երկրագործության ու անասնապահության արդյունքների փոխադրումը դժվարանում էր երկաթգծի և բարեկարգ ճանապարհների բացակայության պատճառով, որը իրականացվում էր գրաստների ***Բարգեչյան (թրք.) «գրաստ, բեռնակիր կենդանի բանեցնող»***, հնամյա սայլերի միջոցով ***Աբուլյան/Աբուլյան/Աբոչյան (ռուս.) «սայլախմբի, գումակի սայլապան», Ֆուրդունջյան (ռուս.) «բեռնասայլ բանեցնող», Ջախջախյան (թրք.) «քառանիվ սայլ», «ծեռնասայլակ բանեցնող», Մերկեպյան (թրք.) «իշատեր, իշասայլ բանեցնող»:*** Բացի այդ, մի բնակավայրից մյուսը ապրանք տեղափոխելու համար մարդիկ ստիպված էին լինում սպասել ուղեկիցների, կառքերի ու վարձու ձիերի ***Կառվարենց (հյ.), Արապաճյան/Արապաջյան/Արաբաջյան (թրք.), Քոչաշյան (թրք.), Ֆայտոնջյան (թրք.) «կառապան, կառավար», Ջունդանյան (արաբ.–թրք.) «վարժ ձիավոր», Պեյկիրճյան (թրք.) «վարձով ձի տրամադրող»:***

XIX դ. վերջին տասնամյակներին վաշխառությունը տարածված էր Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Տարոնում և Վասպուրականում: Գյուղացիները պետական հարկերը վճարելու նպատակով վաշխառուներից ***Թավաջյան (թրք.) «վաշխառու», Կարգանյան (թրք.), Ղարգիմալյան***

[1] Ա. Համբարյան, Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856–1914 թթ., Երևան, էջ 121.

(թրք.), Գուրամաջյան (արաբ.–թրք.) «վարկատու, պարտատեր», վերցնում էին փող կամ գյուղատնտեսական մթերքներ և վճարել չկարողանալու դեպքում կամ դառնում էին վաշխառուների (ի դեպ, նրանց մեծ մասը հայեր էին) շահագործման հիմնական աշխատուժը, կամ էլ տանում էին գյուղացիների կանանց ու աղջիկներին:

Հայերը, երկրագործական ո՝ անասնապահական աշխատանքներից զատ, զբաղվում էին նաև գյուղատնտեսական մթերքներից պատրաստի սննդանյութեր վերամշակելով: Ժողովրդի բարձր կուլտուրան իր արտահայտությունն էր գտնում նաև յուրօրինակ առանձնահատկություններով սննդակարգի մեջ, որը խոսում է մեր ժողովրդի խոհարարական արվեստի մասին: Հետևաբար, պատահական չէ *Պովարյան (ռուս.), Սիջյան/Աշչիյան/Աշչիյանց/Ասջյան (թրք.), Տաբաթյան/Տաբուրյան (թրք.) «խոհարար»* իմաստով ազգանունների առկայությունը:

Կենդանական մթերքներից առավել գործածական էր ոչխարի ու տավարի միսը, որից պատրաստվում էին զանազան ուտեստներ *Բուդուչյան (թրք.), Փաչաջյան (թրք.) «ոչխարի տոտիկներից կերակուր պատրաստող և վաճառող», Յայնուչյան (թրք.) «մի տեսակ կերակուր՝ յահնի պատրաստող», Քելլեճյան (պրսկ.–թրք.) «գլխուղեղ (ոչխարի) պատրաստող և վաճառող»:* Հայկական խոհանոցում առանձնապես ընդունված էին աղացած կամ ծեծած մսով կերակուրները՝ կոլոլակի զանազան տեսակները *Քուֆթեչյան (թրք.) «քուֆթա պատրաստող և վաճառող»:* Հայերն ընդհանրապես միս, ձուկ և թռչուն ապխտելու մեծ վարպետ էին, սակայն իրենց բարձրորակ արտադրանքով հատկապես աչքի էին ընկնում Կարինում կառուցված ապխտի ծեռնարկությունները *Իսլեմեջյան (թրք.) «ապխտող, ապխտած սննդամթերք վաճառող», Կակաչյան (թրք.) «ապխտած մթերք (միս) պատրաստող և վաճառող», Բաստրմաջյան (թրք.) «ապխտած միս, բաստուրմա պատրաստող և վաճառող»:*

Որպես սառը կերակրատեսակ՝ մատուցվում էր թթու դրած կանաչեղեն *Թուրշուդյան/Թուրշյան (թրք.) «թթու դնող և վաճառող»:*

Բազմազան մթերքներից պատրաստվող ճաշատեսակները, խորտիկները *Մազեջյան (թրք.) «խորտիկներ պատրաստող և վաճառող»*, համեմվում էին ամոքային, կծու համեմունքներով, սև և կարմիր պղպեղով ու քացախով՝ *Սոմաքյան (թրք.) «աղտոր, կոծոխուր, սումախ պատրաստող և վաճառող», Չեմենջյան/Չեմենեջյան (թրք.) «չման պատրաստող և վաճառող», Բիբերջյան/Պեպերջյան (թրք.) «աղացած տաքդեղ պատրաստող և վաճառող», Թոզյան (թրք.) «փոշի անող (օր.՝ տաքդեղի, հաշիշի), վաճառող», Կաղեկյան (թրք.) «համեմունքի գործով զբաղվող, վաճառող», Միրեկեջյան/Միրկեջյան/Միրքեճյան (թրք.) «քացախավաճառ»:* Հետաքրքիր է, որ ճաշարաններում, խորտկարաններում կերակուրներին համեմունք ավելացնողներն ու որակին հետևողները հաճախ ոչ թե խոհարարներն էին, այլ առանձին աշխատողներ *Համտեսյան (հյ.), Գաղակչյան/Ղաղակչյան (թրք.) «համեմող, մամեմունք ավելացնող», Թեքչիյան (թրք.) «կերակրի համտես անող, որակին հետևող»:*

Մի շարք ազգանվանական հիմքերի իմաստներից ելնելով՝ կարող ենք ասել,

որ մեր ազգային խոհանոցին հատուկ է եղել նաև հրուշակագործությունը՝ թխվածքների ու քաղցրավենիքների պատրաստումը *Բակլավաջյան (թրք.) «մեղրով և ընկույզով թխվածք՝ փախլավա պատրաստող և վաճառող», Պաստաճյան/Բաստաջյան (թրք.) «հրուշակագործ, – վաճառ», Տոնտուրմաջյան/Դոնդուրմաջյան (թրք.) «պաղպաղակագործ, – վաճառ»:*

Ազգանունների հաջորդ խումբը կապվում է հացագործության հետ, որը գալիս է վաղնջական ժամանակներից: Յմտացած հացթուխները, միություն կազմելով, թոնիրներում ու փռերում թխում էին տարբեր տեսակի ու որակի հաց՝ լավաշ, շավթ կամ շոթ («շոթի» ձևով այս հացատեսակը պահպանվել է վրացիների մոտ), մատնաքաշ, սոմա, քաթայիֆ և այլն: Այն արտադրվում էր ոչ միայն օտար վաճառականների, ճամփորդների, այլև տեղական բնակչության համար *Յացագործյան, Յացբանյան, Յացպանյան (հյ.), Խլեբնիկյան (ռուս.), Մեպուրնյան (վրց.) «հացագործ», Թանդրջյան (թրք.) «թոնիր պատրաստող», «թոնրով հաց թխող», Փիրինջյան/Փրինջյան (թրք.), Ֆռնջյան/Ֆռունջյան/Ֆռանջյան (թրք.) «փուռ բանեցնող, փռի տեր», «հացթուխ», Աքմաքչյան/էքմեքճյան/էքմեքջյան/էքմեքչյան (թրք.) «հացագործ, հացթուխ», Բողոջոջյան (թրք.) «հացթուխ, կարկանդակագործ, –վաճառ», Դեյկեմեջյան (թրք.), Յամուրջյան (թրք.) «խմոր հունցող, հացթուխի օգնական», Չորաքչյան/Չորեքչյան (թրք.) «հացթուխ, –վաճառ»:* Կ.Պոլսի, Տրապիզոնի, Զմյուռնիայի և այլ բնակավայրերի հացագործների էսնաֆությունների վիճակն անմխիթար էր, քանի որ կառավարությունը պարտադրում էր իր կանոնները, գնացուցակը և բարձր հարկաչափը: Դրանից բացի, հայ աշխատավորությունը զրկվում էր խաս–էքմեք և ֆուրլա կոչվող հաց գործածելու հնարավորությունից և իրավունքից:

Արևմտյան Յայաստանի որոշ շրջաններ աչքի էին ընկնում ոգելից խմիչքների արտադրությամբ Այսպես 1860–ական թվականներից սկսած՝ մի շարք քաղաքներում և գյուղերում գործում էին օղեթորման ու գինեգործական բավականին կատարելագործված ձեռնարկություններ Խարբերդում ու Բաղեշում, մասնավորապես Մարզաթ ու Կարաչր նահիեներում, Վանի նահանգի մի քանի գյուղերում, հատկապես Շաղբաղինում արտադրում էին «ամենապատուական գինի, որ համբավ ունի ի Վան–Տոսպ, որպես Պորտոյինն՝ ի Ֆրանսիա»[4] և արտահանում երկրի տարբեր շրջաններ: Քաղաքների շուկաներում ու այլ վայրերում կառուցված գինետներում էլ հաջողությամբ վաճառվում էր մեծ քանակությամբ գինի՝ *Մառանջյան (հյ –թրք), «մառանի, գինետան տեր, աշխատող», Գինադարյան (հյ –պրսկ.) «գինու պահեստապետ», Բոդրումյան (թրք.), «մառանի, գինետան տեր կամ աշխատող», Մեյխանաջյան (թրք.) «գինետան տեր, գինեվաճառ», Պոթրումյան/Փոթրումյան, Շիրախանջյան (թրք.) «գինի քամելու մառանի տեր», «գինեվաճառ», Շիրաչյան (թրք.) «մաճառ վաճառող», Մեյմաջյան (թրք.) «գինու մի տեսակ վաճառող»:* XIX դ. 20–ական թվականներին հայ վարպետները հայկական գաղթօջախներում (Նոր Նախիջևան, Ղրիմ) ևս ռճչակված էին օղու և գինու արտադրության բնագավառում *Գինեգործյան (հյ.), Գինեպանյան (հյ.), Պու-*

[4] Մ. Միրախոռեան, Ճշվ. աշխ., մասն Բ, էջ 249:

լաճյան/Բուլաջյան «թեթև ոգելից խմիչք պատրաստող և վաճառող», Շարաբչյան/Շարաբաչյան (թրք.), Մելքյան (թրք.) «գինեգործ, –վաճառ») Գյաքրջյան (թրք.) «կաթիլ–կաթիլ ստացող», «օղի թորող», Ռագբյան/Ռակչյան/Ռահբյան (թրք.) «օղեգործ», «հարբեցող»:

Ենթադրում ենք, որ հայերը զբաղվել են նաև գարեջրի արտադրությամբ՝ տվյալ դեպքում որպես հումք օգտագործելով կորեկը *Բուլարջյան (թրք.) «կորեկից խմիչք պատրաստող»:*

Ընդունված է եղել նաև ոչ ոգելից խմիչքների՝ հյութի և սուրճի պատրաստումն ու վաճառքը, որոնց համապատասխան ազգանվանակերտ հիմքերով ներկայացնում ենք հետևյալ ազգանունները՝ *Շարբաքչյան (թրք.), Շիրիճյան (պրսկ.–թրք.) «օշարակագործ», Շիրակչյան/Շիրիկչյան (թրք.) «քաղցր ջուր վաճառող», Շոռաչյան (թրք.) «խաղողի հյութ պատրաստող», Սրճարարյան (հյ.), Գայֆաթյան/Դայֆաթյան/Դայֆեճյան (թրք.), Կահվերջյան/Կայֆեքյան/Քահվեջյան (թրք.), «սուրճ պատրաստող»:*

Զբաղմունքի այլ տեսակների անվանումներ ևս ազգանվանակերտության հիմք են հանդիսացել: Այս դեպքում յուրաքանչյուր զբաղմունքի համար ունենք սակավաթիվ ազգանուններ (հաճախ մեկ ազգանուն) և զբաղմունքի այդ տեսակները հայ մարդու տնտեսական կյանքում էական դեր չեն խաղացել: Այդ իսկ պատճառով առանձին մեկնաբանություններ չենք տալիս նրանց իմաստներին. *Դիվանչյան (թրք.) «գրասեղնակի աշխատող», Էմանեթյան (թրք.) «առաքիչ, ապրանքի պահպանումն ու առաքումը հանձն առնող», Թասկիրյան (թրք.) «սանիտար», Ինմելյան (թրք.) «իրը ի պահ վերցնող», «պահասենյակ ունեցող», Հայրջյան (արաբ.–թրք.) «բարեգործ», Շունդակչյան (թրք.) «փաթեթավորող», Դամինյան (արաբ.–թրք.), Խարչաֆյան (թրք.) «ծախսարար, մատակարար», Եշչյան/Եշիլյան (թրք.) «գույգով աշխատող», Էմչիաջյան (թրք.) «համատեղ աշխատող», Դեգերմենջյան/Դեգերմերյան (թրք.), Դեյերմյան (թրք.), Թահմինյան (թրք.) «գին որոշող, գնահատող», Աճերյան (արաբ.–թրք.), Գրաբյան/Քրաբյան (թրք.) «վարձով տվող», Յաղլիջյան (թրք.) «վարձով շոր տվող», Աբլորյան (հյ.), Կուդբազյան (թրք.) «աքաղաղ խաղացնող, աքաղաղամարտով զբաղվող», Բուբուդյան (թրք.) «մոլախաղերի, մասնավորապես զառերով խաղի սիրահար», Քումարջյան (թրք.) «մոլախաղով, թղթախաղով զբաղվող», Բարխանաջյան (թրք.), Խանջյան (թրք.) «իջևանատեր», Օդաբաշյան/Օթաբաշյան/Ադաբաշյան/Օդաջյան/Օդյան/Օթյան (թրք.) «հյուրանոցի տեր, հյուրանոցի աշխատող»*[5]:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ գալիս ենք այն եզրակացության, որ այս իմաստային դաշտում գերակշռում են վաճառականների, երկրագործությամբ և անասնապահությամբ զբաղվողների, ուտեստներ, ոգելից խմիչքներ և օշարակներ պատրաստողների, նավավարների և սայլապանների անուններից սերված ազգանվանական հիմքերը, որոնք հաստատում են հայ մարդու՝ այդ ոլորտներում գործուն մասնակցություն ունենալը:

[5] Ի դեպ, հայերն իրենց լին կառուցում իրենց իջևանատներն ու հյուրանոցները առևտրական հարաբերություններով պայմանավորված:

А. Бархударян

ОСНОВЫ ФАМИЛИЙ, МОТИВИРОВАННЫХ СУЩЕСТВИТЕЛЬНЫМИ СО ЗНАЧЕНИЕМ РОДА ДЕЯТЕЛЬНОСТИ

Статья посвящена анализу мотивирующих основ фамилий со значением рода деятельности человека. Проведенные исследования свидетельствуют о том, что в этом семантическом поле превалируют фамилии, образованные от слов со значением торговли, земледелия, животноводства, а также производителя продуктов питания, напитков, сладостей и пр. Данные языковые наблюдения подтверждают факты активного участия армян в указанных сферах деятельности человека.

H. Barkhoudarian

SURNAMEBUILDING STEMS COMING OF OCCUPATION

The article touches upon some issues concerning surnamebuilding stems coming of people's occupation. As a result of our investigation we found out that such stems were originally in close connection with names of people having certain occupation mainly in the field of trade (merchants, cooks, etc.), as well as in agriculture (farmers, peasants, cattle–breeders, etc.). This fact really asserts Armenians' active participation in the mentioned spheres.